ւաքոյթին արած իր զեկուցման մէջ բացականչում էր, թէ նա բոլշեւիկեան ռեժիմին կը գերադասէր ոչ թէ Ալէքսանդր Բ.ի, այլ նոյնիսկ Ալէքսանդր Գ.ի ռեժիմը:

Ազատութիւնների ջնջումը մեծագոյն ապացոյցն է, որ տիրող իշխանութիւնը ապրում է օրհասական տագնապ: Դիկտատուրան, որ միշտ մի աննշան խմբակի իշխանութիւն է — այլապէս նա կը դադարէր դիկտատուրա կոչուել եւ կը դառնար համաժողովրդական — դիկտատուրան ասում եմ, անգամ եթէ որոշ բարիք է բերում, աշխարհի ամենաանբարոյական կառավարական ձեւն է: Նրա իդէալն է մարդ-մեքենան: Իրագործել այս ձգտումը եւ պարծենալ նրանով, կը նշանակի զուրկ լինել բարոյական ու հասարակական ամէն բնազդից եւ չարագործի բթամտութիւնն ունենալ:

Մարդ-մեքենան անարգանքն է քաղաքակրթութեան եւ թքանք բոլոր դարերի մարտիրոսներին, որոնք մի օր մեռան խղճմտանքի ու բանականութեան ազատութեան համար: Իրար կողք շարուած հարիւր մեքենան, որոնք միաժամանակ նոյն նպատակով շոգի ու ծուխ են ժայթքում, յար եւ նման են իրար, նոյն րիթմիկ շարժումն ունին, նոյն թափը, նոյն հեւքը: Նրանցից իւրաքանչիւրը իր հարիւր ընկերակիցների ճշգրիտ պատկերն է. մինչդեռ նրանց առջեւը կանգնած հարիւր բանուորը, իրենց ձեռքի միատեղ շարժումից դուրս՝ ուրիշ նմանութիւն չունեն — նրանք հարիւր տարբեր էակներ են եւ ամէն մէկը մի տիեզերք է գլխով ու սրտով:

Փորձել բռնութեամբ մեքենայի վերածել այդ բանական արարածը, որ ինքնին անսահման ու հրաշագեղ կարելիութիւնների մի վառ հնոց է, մեծագոյն ոճիրն է մարդկութեան դէմ:

Մարդը յաւիտենական նպատակ է եւ նրանից դուրս՝ ուրիշը չկայ:

Տիեզերքը ոչինչ ունի աւելի բարձր ու աւելի գեղեցիկ քան օրրանի մէջ ճչացող այն փոքրիկ արարածը, որի վրայ հսկում է մի խնամոտ մայր: Կեանքի կեդրոնն ու արեւն է այդ մանուկը, նրա համար են բոլոր պետութիւնները, բոլոր կառավարութիւնները, բոլոր պառլամենտները, դահ, թագ ու թագաւոր, եւ սրանց բոլորի փլուզումները յեղափոխութեանց գրոհի տակ:

Նա պէտք է աճի, այն մանուկը, անկաշկանդ զարգանայ, բարձրանայ, ստեղծագործի իր կամքի եւ իմացականութեան բոլոր թափով, ցաւի ու խնդայ ազատօրէն: Նա համակ մարդկութիւնն է: Եւ եթէ մարդկային որեւէ զանգուածային շարժում թէկուզ յանուն պրոլետարիատի, պիտի ժպրհի խափանել այդ փոքրիկ արարածի բնական զարգացումը եւ փոխանակ բանական ու ստեղծագործ աժդահայի՝ նրանից ծաքի եւ հողու գաճաճ, մեքենայ, մի խեղաթիւրուած ու այլանդակ էակ, մի հրէշ պատրաստի, ապա այդպիսի յեղաշրջումը սոսկական խելագարութիւն է, եւ պէտք է խորտակուի անխուսափելիօրէն, անգամ այս համակերպուող, այս ապաթիկ Ռուսիայում, ուր գետերն այնպէս դանդաղ են, ձմեռն այնպէս խստաշունչ ու երկարատեւ եւ գարունը՝ երազ:

Բոլշեւիզմը պիտի ընկնի ու անհետանայ նաեւ, որպէս հակասութիւնների, կեղծիքի, ստի, մաքիաւելիզմի մի այլանդակ սիստեմ: Նրա նախորդ բռնակալ ցարիզմը մի անգամ սահմանադրութիւն կեղծեց, խարէութեամբ դուրս քաշեց գետնափորերում գործող յեղափոխութիւնը, արեան ճապաղիքի մէջ խեղդեց Ստոլիպինի երկաթէ ձեռքով, ապա ինքն էլ, այդ կեղծարար ցարիզմը, նոյն արեան մրրկի մէջ անհետացաւ:

Բոլշեւիզմը, որ կեղծում է ամէն օր, եւ ամէն ինչ, խղճմտանքից մինչեւ արուեստը, պատմութիւնից մինչեւ գիտութիւնը, կեղծում է ամբողջ յեղափոխութիւնը, ամբողջ քաղաքակրթութիւնը, կեղծում է անհատից՝ անհատ, դասից՝ դաս, չի կարող ցարիզմից տարբեր վախճան ունենալ:

Տասն տարուց ի վեր տեւող այդ կեղծիքի, խարէութեան, մաքիաւելիզմի մրուրը թանձրանում է օր աւուր, ժամ առ ժամ մի ցինիզմով, որ յատուկ է սեփական կորստեան յստակ գիտակցութիւն ունեցող չարագործներին:

Խաղաղութեան կարգախօսով խաբում են իրենց աշխատաւոր զանգուածներին, եւ տենդօրէն պատրաստւում պատերազմի. այսօր ոչ